600.0232.13.06.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 հունիսի 2018 թվականի №232Ա
քաղ. Երևան

«ՀԵՐԱ Ս.Վ.» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ԳՈՒՄԱՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ ՊԱՐՏԱՎՈՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2008 թվականի մայիսի 12-ի №251Ա որոշմամբ «ՀԵՐԱ Ս.Վ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0370 թույլտվության գործողության ժամկետը սահմանված է մինչև 2018 թվականի մայիսի 12-ը, և Ընկերությունն այն երկարաձգելու հայտով չի դիմել Հանձնաժողով,

բ) Ընկերությունը պատշաճ կարգով չի կատարել «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17.1-րդ հոդվածով սահմանված ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների վճարման պարտավորությունը,

գ) Ընկերությունից հօգուտ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի 777 745 (յոթ հարյուր յոթանասունյոթ հազար յոթ հարյուր քառասունհինգ) դրամ գումարի (հաշվարկված՝ 2010 թվականից մինչև 2013 թվականի ապրիլի 25-ը) բռնագանձման վերաբերյալ առկա է Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2013 թվականի հոկտեմբերի 14-ին օրինական ուժի մեջ մտած դատական ակտը,

դ) Հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 23-ի №283Ա որոշմամբ Ընկերությունը պարտավորեցվել է մինչև 2014 թվականի հուլիսի 23-ն ընկած ժամանակահատվածի համար ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարների մասով

հաշվարկված 335 825 (երեք հարյուր երեսուներեք հազար ութ հարյուր քսանհինգ) դրամ պարտքը փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե,

ե) Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2017 թվականի մայիսի 2-ի №ԵԱԴԴ/0170/04/16 վճռով Ընկերությունը սնանկ է ճանաչվել,

և հիմք ընդունելով «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասը, 17.1 հոդվածը, «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 37-րդ հոդվածը և Հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 11-ի №231Ն որոշումը՝ Հանձնաժողովը որոշում է.

1. Ընկերությանը՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից տասնօրյա ժամկետում №900005281812 հաշվեհամարով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցել ռադիոհաճախականության օգտագործման վճարի մասով 2014 թվականի հուլիսի 24-ից մինչև 2018 թվականի մայիսի 12-ը հաշվարկված 1 127 052 (մեկ միլիոն հարյուր քսանյոթ հազար հիսուներկու) դրամ պարտքը, որից 773 077 (յոթ հարյուր յոթանասուներեք հազար յոթանասունյոթ) դրամը ռադիոհաճախականության օգտագործման պարտադիր վճարն է, իսկ 353 975 (երեք հարյուր հիսուներեք հազար ինը հարյուր յոթանասունհինգ) դրամը՝ ժամկետանց պարտավորության համար հաշվարկված տույժը:
2. Ընդունել ի գիտություն, որ Ընկերությունն իրավասու է.
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
13 հունիսի 2018թ.